Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը «Ֆինանսական հաշիվների վերաբերյալ տեղեկությունների ավտոմատ փոխանակման մասին» իրավասու մարմինների բազմակողմ համաձայնագրի լրացման հայերեն պաշտոնական թարգմանությունն է:

**Հայաստանի Հանրապետության**
**արտաքին գործերի նախարարություն**

# «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՎՏՈՄԱՏ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ԻՐԱՎԱՍՈՒ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲԱԶՄԱԿՈՂՄ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԼՐԱՑՈՒՄ

Քանի որ իրավասու մարմինները «Ֆինանսական հաշիվների վերաբերյալ տեղեկությունների ավտոմատ փոխանակման մասին» իրավասու մարմինների բազմակողմ համաձայնագրի (ՄՀՍ ԻՄԲՀ) ստորագրող կողմերն են,

քանի որ իրավասու մարմինները ցանկանում են հարկային հարցերով փոխադարձ աջակցության ուղղությամբ իրենց հարաբերություններն էլ ավելի զարգացնելու միջոցով շարունակաբար բարելավել միջազգային հարկային պարտավորությունների կատարումը, ինչպես արտացոլված է ՄՀՍ ԻՄԲՀ-ի շրջանակներում տեղեկությունների գործող ավտոմատ փոխանակումներում,

քանի որ ՄՀՍ ԻՄԲՀ-ով սահմանվում է, որ պետությունների օրենսդրությունները ժամանակ առ ժամանակ կենթարկվեն փոփոխությունների՝ Միասնական հաշվետվողական ստանդարտում կատարված թարմացումներն արտացոլելու համար, եւ պետության կողմից Միասնական հաշվետվողական ստանդարտն ընդունվելուն պես կհամարվի, որ այդ պետության համար ՄՀՍ ԻՄԲՀ-ն վերաբերում է թարմացված տարբերակին,

քանի որ Միասնական հաշվետվողական ստանդարտը թարմացվել է 2023 թվականին՝ փոփոխելու համար դրա գործողության շրջանակը եւ ընդլայնելու համար հաշվետվողականությանը ներկայացվող պահանջներն ու պատշաճ ստուգման ընթացակարգերը,

քանի որ սույն Լրացումը նպատակ ունի ավելացնելու ՄՀՍ ԻՄԲՀ-ի շրջանակներում փոխանակման ենթակա որոշակի տեղեկատվական տարրեր՝ արտացոլելու համար Միասնական հաշվետվողական ստանդարտի 2023 թվականի թարմացված տարբերակով հաշվետվողականությանը ներկայացվող լրացուցիչ

պահանջները,

իրավասու մարմինները համաձայնեցին հետեւյալի մասին.

ԲԱԺԻՆ 1

***Հաշվետու հաշիվների վերաբերյալ փոխանակվելիք տեղեկություններում կատարված լրացումները***

Սույն Լրացման 2-րդ բաժնի 2-րդ պարբերության «ա» ենթապարբերության «i» կետի համաձայն արված ծանուցմանը համապատասխան՝ ՄՀՍ ԻՄԲՀ-ի 2-րդ բաժնի 2-րդ պարբերության համաձայն մեկ այլ պետության յուրաքանչյուր հաշվետու հաշվի վերաբերյալ փոխանակվելիք լրացուցիչ տեղեկությունները ներառում են հետեւյալը.

1. արդյոք յուրաքանչյուր հաշվետիրոջ համար տրամադրվել է վավեր ինքնահավաստագիր.

2. դերը (դերերը), որի (որոնց) ուժով կազմակերպություն հանդիսացող հաշվետիրոջ վերահսկող անձ հանդիսացող յուրաքանչյուր հաշվետու անձ կազմակերպության վերահսկող անձ է, եւ արդյոք յուրաքանչյուր այդպիսի հաշվետու անձի համար տրամադրվել է վավեր ինքնահավաստագիր.

3. հաշվի տեսակը, արդյոք հաշիվը նախկինում գոյություն ունեցող հաշիվ է, թե նոր հաշիվ, եւ արդյոք հաշիվը համատեղ հաշիվ է, ներառյալ՝ համատեղ հաշվետերերի քանակը. եւ

4. իրավահարաբերություն հանդիսացող ներդրումային կազմակերպությունում ցանկացած բաժնային մասնակցության դեպքում՝ այն դերը (դերերը), որի (որոնց) ուժով հաշվետու անձը բաժնային մասնակցության սեփականատեր է:

ԲԱԺԻՆ 2

***Ընդհանուր պայմաններ***

1. Սույն Լրացումն ուժի մեջ կլինի այն իրավասու մարմինների համար, որոնք նույնպես Լրացումը ստորագրող կողմեր են: Այն կլինի ՄՀԱ ԻՄԲՀ-ի անքակտելի մասը, եւ ՄՀԱ ԻՄԲՀ-ի դրույթները կկիրառվեն *mutatis mutandis* սույն Լրացման նկատմամբ:

2. Իրավասու մարմինը պետք է սույն Լրացման ստորագրման պահին կամ դրանից հետո հնարավորինս շուտ Համակարգող մարմնի քարտուղարությանը տրամադրի հետեւյալը.

ա) թարմացված ծանուցում՝ համաձայն ՄՀԱ ԻՄԲՀ-ի 7-րդ բաժնի 1-ին պարբերության «ա» ենթապարբերության՝

i) հաստատելով, որ իր պետությունն ունի անհրաժեշտ գործող օրենքները՝ Միասնական հաշվետվողական ստանդարտի 2023 թվականի թարմացված տարբերակը ներդնելու համար, եւ նշելով սույն Լրացման 1-ին բաժնի եւ հաշվետվողականության եւ պատշաճ ստուգման ընդլայնված ընթացակարգերի կիրառումը կամ ավարտն ուժի մեջ մտնելու համապատասխան ամսաթվերը կամ սույն Լրացման ժամանակավոր կիրառման ցանկացած ժամանակահատված՝ պայմանավորված առկախ ազգային օրենսդրական ընթացակարգերով (եթե այդպիսիք կան). կամ

ii) նշելով, որ իր պետությունը դեռեւ չունի անհրաժեշտ գործող օրենքները՝ Միասնական հաշվետվողական ստանդարտի 2023 թվականի թարմացված տարբերակը ներդնելու համար, եւ հետեւաբար համաձայնության հարցում ուղարկելով, որպեսզի շարունակի սահմանված անցումային ժամանակահատվածում տեղեկություններն ուղարկել առանց Միասնական հաշվետվողական ստանդարտի 2023 թվականի թարմացված տարբերակով սահմանված՝ հաշվետվողականության եւ պատշաճ ստուգման ընդլայնված ընթացակարգերը կիրառելու կամ ավարտին հասցնելու. եւ

բ) թարմացված ծանուցում՝ համաձայն ՄՀՍ ԻՄԲՀ-ի 7-րդ բաժնի 1-ին պարբերության «գ» ենթապարբերության, նշելով իրավասու մարմինների այն պետությունները, որոնց համար այն ընդունում է սույն Լրացման 2-րդ պարբերության «ա» ենթապարբերության «ii» կետի համաձայն ներկայացված ծանուցման մեջ նշված նրանց հարցումը:

Կատարված է անգլերենով եւ ֆրանսերենով, ընդ որում, երկու տեքստերն էլ հավասարազոր են: